

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է 75 րոպե

9-10-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին և կազմակերպիչներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքները ինքնուրույն և ազնիվ կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Հայոց այբուբենի իրար հաջորդող n-ր չորս տառերով է կազմվում բառ:

Ա. աբգդ Բ. գդեզ Գ. ժիլխ Դ. նշոչ Ե. տրցու

2. Տիեզերք բառի տի մասը նշանակում է՝

Ա. կարճ Բ. երկար Գ. մեծ Դ. փոքր Ե. հաստ

3. Առաջին տողն ունի հետաքրքիր օրինաչափություն: Այն գտնելով՝ կլրացնես երկրորդ տողը:

ՅՈՐԵՆ (ՆԵՐԿԱ) ԿԱՊԻԿ
ՄԵՐԱՆ (.) ՈՏՆԱԿ

Ա. նարոտ Բ. անրակ Գ. մերակ Դ. նավակ Ե. ամրան

4. Ամբողջացնել առածը. «Արդարը, որ _____, չի կտրվի, խարդախը, որ գերան դառնա, կկտրվի»:

Ա. թել դառնա Բ. լար դառնա Գ. պարան դառնա
Դ. ժապավեն դառնա Ե. մազ դառնա

5. Քանի՞ բառ կստացվի, եթե լոր, կոն, վար, պար, ունք, դեր բառերին կամ աջից, կամ ձախից ավելացնենք «ք» տառը:

Ա. 2 Բ. 3 Գ. 4 Դ. 5 Ե. 6

6. Ի՞նչ բառ է պատկերված ԲԲԲ նկարելուկով:

Ա. բարք Բ. բերք Գ. բուք Դ. բաք Ե. քարք

7. Յոթ լեզու ունի, բերան չունի, մարդ է կծում: (ժողովրդական հանելուկ)

Ա. օձ Բ. մողես Գ. սիգախոտ Դ. եղինջ Ե. երիցուկ

8. Նկարելուկում գտիր Ղազարոս Աղայանի բանաստեղծություններից մեկի վերնագիրը:

28, 29, 30, 31 օր



- Ա. Օրեր և եղանակներ
- Բ. Ամիսներ և չորս եղանակ
- Գ. Շաբաթվա արևոտ եղանակը
- Դ. Ամսվա օրերը ներկեց արևը
- Ե. Հունվարյան արևոտ եղանակ

9. Ո՞ր մասնագետն է զբաղված ոչ իր մասնագիտությամբ:

- Ա. Ակնաբույժը ստուգում էր այցելուի տեսողությունը:
- Բ. Բրուտը թրծում էր պատրաստած թաղարները:
- Գ. Փականագործը հոսանքի լարերն էր ստուգում:
- Դ. Ատաղձագործը հարմար տախտակներ էր ընտրում:
- Ե. Հնագետը նոր գտածոները ցուցադրեց:

10. Բառազույգերից մեկում -ական-ով կազմված բառը նաև անձ է:

- Ա. լեռ-լեռնական Բ. գիր-գրական Գ. տեր-տիրական
- Դ. սեռ-սեռական Ե. մայր-մայրական

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ճուպան, առասան, թոկ, պարան, պարույկ, լար, չվան բառերն ինչ-որ օրինաչափությամբ կապված են իրար: Մեկը չի համապատասխանում այդ օրինաչափությանը: Գտեք այդ բառը:

Ա. առասան Բ. պարույկ Գ. թոկ Դ. լար Ե. ճուպան

12. Տրված բառերից ո՞րն է (կամ որո՞նք են) հալ բառի հետ նույնարմատ:

- 1. հավասարություն 2. հավաքական 3. հավերժություն
- 4. հավկուրություն 5. միրհավ

Ա. 1 Բ. 3, 4 Գ. 4 Դ. 5 Ե. 4, 5

13. Ի՞նչ բառ է պատկերված նկարելուկով:

Ա. ջինջ Բ. ջնջում Գ. ջանք Դ. ջոջ Ե. ջերմ

14. Անկոթ, անկոչ, անկում, անկուշտ, անսիրտ բառերից ո՞րը պետք է «հեռանա»:

Ա. անկոթ Բ. անկոչ Գ. անկում Դ. անկուշտ Ե. անսիրտ

15. Քանի՞ կենդանու և թռչունի անուն կգտնես ճոճանակ, ամուլ, լեզու, բարակացավ, նշույլ, հավատարիմ, գայլիկոն, մակաբույծ, խայծ, գեղաշուք բառաշարքում՝ տառերը չտեղաշարժելով:

Ա. 4 Բ. 5 Գ. 6 Դ. 7 Ե. 8

16. Տրված կենդանիներից ո՞րը «կապ ունի» մարդու որկորի հետ:

Ա. կատուն Բ. կոկորդիլոսը Գ. կրիան Դ. քամելեոնը Ե. վագրը

17. Ի՞նչ բառ է պատկերված **Գ** նկարելուկով:
ԱՆ

Ա. գանգուր Բ. գիտական Գ. անգղ Դ. գանգ Ե. հավանգ

18. Ո՞ր խմբի անվանումն է սխալ նշված:

Ա. որսաշներ – ասպականի Բ. նավեր – տորմիդ Գ. այծեր – ջոկ
Դ. աստղեր – բույլ Ե. աղվեսներ – ճահուկ

19. Ի՞նչ նախադասություն է գաղտնագրված:

Էջնուրեայթխեջմեն

Ա. Ես ուրախ եմ: Բ. Չեմ ուզում քնել: Գ. Աչքովս տեսել եմ:
Դ. Սպասում եմ քեզ: Ե. Ոչ մեկը չեկավ:

20. ԳԱՎԱԶԱՆ բառի իրար հաջորդող տառերով հնարավոր է կազմել ԳԱՎ, ԱՎԱԶ, ԱՎԱԶԱՆ, ՎԱԶ բառերը: Նման ձևով քանի՞ բառ է հնարավոր կազմել ՆՇԱՔԱԸ բառից:

Ա. 1 Բ. 2 Գ. 3 Դ. 4 Ե. 5

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Ո՞ր բառն է շարքում «ավելորդ»:

Ա. կինճ Բ. կիստար Գ. ձուռակ Դ. մատակ Ե. զամբիկ

22. Ի՞նչ է գրված ՅԼՆՆՌԻ նկարելուկով:

Ա. Յուրտն ու նուռը Բ. Յորենը և նուռը առ Գ. Յորենն ու նուռ առա
Դ. Յորենն ու առուն Ե. Յորենի արտում նուռ չկա

23. Ո՞ր բառագույգի մեջ են բառերն իրար «ազգակից»:

Ա. արջամուկ-արջառ Բ. վառվռուն-վառեկ Գ. հովասուն-հովատակ
Դ. ամիլիկ-տասնամյակ Ե. երկնաքերձ-քերձե

24. Տրված ո՞ր գույգի առաձները նույնիմաստ չեն:

Ա. «Որտեղ հաց, այնտեղ կաց» – «Որտեղ կարագ, այնտեղ պատարագ»
Բ. «Մինչև ամպը չգոռա, անձրև չի գա» – «Մինչև չգա հետինը, չի հիշվի առաջինը»
Գ. «Մի ծաղկով գարուն չի գա» – «Մի ձեռքը ծափ չի տա»
Դ. «Ես աղա, դու աղա, մեր աղունը ո՞վ աղա» – «Ես ուստա, դու ուստա, բա մեր աղբը ո՞վ դուրս տա»
Ե. «Ամպը գոռալու փոխարեն սարն է գոռում» – «Մայրը ճռալու փոխարեն սայլվորն է ճռում»

25. Նրա կերպարի բնութագիրը ազգանվան մեջ է: Ո՞վ է նա:

Ա. Սյունին Բ. Կամսարյանը Գ. Զիմզիմովը
Դ. Մարութխանյանը Ե. Արծրունին

26. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

Ա.	30154	Բ.	20154	Գ.	40154	Դ.	70154	Ե.	32154
	+		+		+		+		+
	<u>36154</u>		<u>26154</u>		<u>46154</u>		<u>76154</u>		<u>36154</u>
	66308		46308		86308		146308		68308

27. Ո՞ր բառակապակցությունը չի համապատասխանում ընդհանուր օրինաչափությանը:

Ա. խաղողով լցված կողով
Բ. հնամենի սուրբ մայրենի
Գ. ելույթ ունեցող համույթ
Դ. օդով տարածվող վարակ
Ե. կարգին հաշվարկված գին

28. **Չյուրո, ռելե, քամի, ֆայտոն, սոյյարկա, այյակ, սիրտ** բառերում թաքնված օրինաչափությունը վերաբերում է՝

Ա. մարգաշխարհին Բ. տրանսպորտին Գ. երաժշտությանը
Դ. ֆիզիկային Ե. աշխարհագրությանը

29. Երկուշաբթի օրվանից քաղթենի տիկինը անդադրում որոնում էր կոճկած վերնաշապկի գրպանում դրած տառը: Ո՞ր տառն էր որոնում:

Ա. ՈԻ Բ. Ո Գ. Է Դ. Ե Ե. Ա

30. **Կիլոգրամ, կիլոմետր, պարոն, երեկո, վայրկյան** բառերից ո՞րը «արագ» գրել չես կարող:

Ա. կիլոգրամ Բ. կիլոմետր Գ. պարոն Դ. երեկո Ե. ամպեր